ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. հոկտեմբերի 16-ից 18-ը Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև) գործուղման

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**
   Վարդան Գևորգյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**
   ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ / ԺԱՄԿԵՏԸ**
   Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև) /հոկտեմբերի 16-ից 18-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**
   Հանքարդյունաբերության, հանքանյութերի, մետաղների և կայուն զարգացման հարցերով Միջկառավարական Ֆորումի (ՄԿՖ) տնօրեն Գրեգ Ռադֆորդ

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**
   Մասնակցություն Հանքարդյունաբերության, հանքանյութերի, մետաղների և կայուն զարգացման հարցերով միջկառավարական Ֆորումի 13-րդ ամենամյա ընդհանուր հանդիպմանը

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**
   Քննարկվեցին արհեստանոցային և փոքրածավալ հանքարդյունաբերության ոլորտում տարածաշրջանային առաջնահերթությունները, հանքարդյունաբերությունը կարգավորող օրենսդրության և կարգավորիչ նորմերի զարգացման միտումները, տեղական բովանդակային քաղաքականության մշակման ուղիները:

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**
   Ելույթներ հնչեցին հանքարդյունաբերության ոլորտում մարտահրավերների և նոր արդյունաբերական մոտեցումների վերաբերյալ, մասնավորապես կարևորվեցին հանքարդյունաբերության ոլորտում ընդհանուր տեսլականի մշակման գործում կառավարության, հասարակության, գործարար համայնքի ներգրավվածությունը: Համաժողովի շրջանակներում քննարկվել են կազմակերպությանը հետագայում Հայաստանի անդամակցության հնարավորությունները:

8. **ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ**
   Հանդիպման արդյունքներով փաստաթղթեր չեն ստորագրվել

9. **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ**
   Շարունակել աշխատանքները համաժողովի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացման ուղղությամբ

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ **ՎԱՐԴԱՆ ԳԵՎՈՐԳՅԱՆ**

19.10.2017թ